Արձանագրություն N 2

2023 թվականի առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ հակաուռուցքային դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/10» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «17» «Հոկտեմբերի» 2022թ.
ժամը 15:00

Բացման նիստին մասնակցել են՝

Հանձնաժողովի նախագահ Վ. Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Վ. Հակոբյան)

Ընդունել ի գիտություն, որ 30.09.22թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2022 թվականի հոկտեմբերի 11-ին, ժամը 14:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2022 թվականի հոկտեմբերի 12-ին ժամը 14:00-ին: 2022 թվականի հոկտեմբերի 13-ին ժամը 14:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ	mercado@netsys.am	00471216
2	«Էյ Բի Սի Ֆարմացիա» ՍՊԸ	a.movsesyan@abc-pharm.com	00129804
3	«ԱԿԱԷՄ» ՍՊԸ		00129804
4	«Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ	import@alfapharm.am	02606482
5	«Մաունթ» ՍՊԸ	mount.llc@gmail.com	00094675
6	«Վիոլետա Ֆարմ» ՍՊԸ	violetapharm@violetaclinic.com	01044241

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Վ. Հակոբյան)

Մասնակցի կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Վ. Հակոբյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես՝ «Մաունթ» ՍՊԸ-ի կողմիցներկայացված հայտում, որպես առաջին տեղ զբաղեցրած 8-րդ և 17-րդ չափաբաժինների համար ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերում (տեխնիկական բնութագրերում) սխալ են նշված ֆիրմային անվանումները և ապրանքային նշանները, ինչպես նաև ներկայացված չեն ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող տեղեկանքը՝ չգրանցված դեղերի համար: «Էյ Բի Սի Ֆարմացիա» ՍՊԸ-ին՝ որպես առաջին տեղ զբաղեցրած 2-րդ չափաբաժնի համար ներկայացված չէ ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող տեղեկանքը՝ չգրանցված դեղի համար: «ԱԿԱԷՄ» ՍՊԸ-ի կողմից որպես առաջին տեղ զբաղեցրած 3-րդ, 25-րդ և 32-րդ չափաբաժինների համար ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերում (տեխնիկական բնութագրերում) նշված չեն ճիշտ ֆիրմային անվանումները և ապրանքային նշանները, ինչպես նաև ներկայացված չէ ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող տեղեկանքը՝ չգրանցված դեղերի համար: «Վիոլետա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից որպես առաջին տեղ զբաղեցրած 9-րդ, 20-րդ, 21-րդ, 26-րդ և 29-րդ չափաբաժինների համար ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերում (տեխնիկական բնութագրերում) նշված չեն ճիշտ ֆիրմային անվանումները և ապրանքային նշանները, ինչպես նաև ներկայացված չէ ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող տեղեկանքը՝ չգրանցված դեղերի համար «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից որպես առաջին տեղ զբաղեցրած 1-ին, 4-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 18-րդ, 19-րդ, 23-րդ, 24-րդ, 27-րդ, 30-րդ և 33-րդ չափաբաժինների համար ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերում (տեխնիկական բնութագրերում) նշված չեն ճիշտ ֆիրմային անվանումները և ապրանքային նշանները, ինչպես նաև ներկայացված չէ ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող տեղեկանքը՝ չգրանցված դեղերի համար: «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ին՝ որպես առաջին տեղ զբաղեցրած 22-րդ

չափաբաժնի համար ներկայացված չէ ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող տեղեկանքը՝ չգրանցված դեղի համար: Գնահատող հանձնաժողովը ընդունել է որոշում կասեցնել մեկ օրով հայտերի գնահատումը, մինչև անհրաժեշտ արձանագրված անճշտությունների շտկումը էլեկտրոնային աճուրդ համակարգում, ինչպես նաև պահանջվող տեղեկանքների ներկայացումը: «Վիոլետա Ֆարմ» ՍՊԸ-ին առաջարկվել է նաև շտկել և ներկայացնել 9-րդ, 21-րդ, 26-րդ և 29-րդ չափաբաժինների համար առաջարկվող ապրանքի ծագման երկիրը: Էլեկտրոնային աճուրդ համակարգում կատարված շտկումները հասանելի են եղել 17.10.2022 թվականին: Իսկ պահանջված ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրելիք հավաստող տեղեկանքների համար ներկայացվել են գրություններ առ այն, որ մեկ աշխատանքային օրում հնարավոր չէ ներկայացնել պահանջված տեղեկանքները: Ելնելով նշվածից գնահատող հանձնաժողովը կայացրել է որոշում կասեցնել գնահատումը, մինչև տեղեկանքների ներկայացումը, գնման ընթացակարգի հայտերը ճիշտ գնահատելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Վ. Հակոբյան

Անդամներ՝ ---------- Մ. Հարությունյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան